THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

CRRC Armenia

Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն

Երևան, Հայաստան
Հուլիս, 2020

ԱՄՓՈՓԱԳԻՐ

- Նոր կորոնավիրուսի համավարակը ներկայումս ընկալվում է որպես երկրի առջև ծառացած ամենաառաջնային խնդիր (36%), որին հաջորդում է գործազրկությունը (33%):
- Հարցվածների կեսից ավելին (54%) նշել են, որ համավարակի պատճառով իրենց անձնական ֆինանսական վիճակը վատթարացել է:
- Հարցվածների շուրջ մեկ երրորդը (35%) համավարակի բռնկման պատճառով կորցրել է իր աշխատանքը, կամ կրճատվել են իր աշխատանքային ժամերը / եկամուտը:
- Կորցրած եկամուտը լրացնելու համար, հարցվածների 36%-ը կրճատել է ծախսերը սննդի և 43%-ը՝ այլ անհրաժեշտ պարագաների վրա:
- Հարցվածների երեսուն տոկոսը (30%) հավատում է, որ առաջիկա 12 ամիսների ընթացքում իրենց տնտեսական վիճակը կմնա նույնը, մինչդեռ քսանհինգ տոկոսը (25%) հավատում է, որ այն կբարելավվի:
- Մեկ երրորդը (33%) հավատում է, որ իրենց տնտեսական վիճակը մեկ տարի հետո կվատանա:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

- Հարցվածների մեծամասնությունը վստահում է առողջապահական համակարգին (54%-ը «Լիովին վստահում է», 27%-ը «Ավելի շուտ վստահում է») և Հայաստանի առողջապահական պետական կառույցներին (42%-ը «Լիովին վստահում է» և 27%-ը «Ավելի շուտ վստահում է»):
- Ոստիկանությունը նույնպես ունի վստահության բարձր մակարդակ հասարակության շրջանում (43%-ը «Լիովին վստահում է» և 29%-ը «Ավելի շուտ վստահում է»):
- Շատերը կարծում են, որ կորոնավիրուսի հետևանքների դեմ պայքարում կառավարության՝ քաղաքացիներին ուղղված աջակցության փաթեթները լիովին բավարար են (19%) կամ ավելի շուտ բավարար են (34%):
- Չնայած կառավարության աջակցության փաթեթներից բավարարվածությանը, հարցվածների երկու երրորդը (65%) նշել է, որ չի օգտվել ոչ մի միջոցառումից:
- Կառավարության աջակցության նախընտրելի միջոցառումների շարքում վարկային վճարների /մարման ժամկետների հետաձգումը ստացել է ամենաշատ պատասխանները (27%), որին հաջորդում է կոմունալ վճարումների սուբսիդավորումը (24%):
- Հարցվածների մոտ 43%-ը կարծում է, որ դպրոցները սովորականի պես կվերաբացվեն սեպտեմբերին: Դպրոցների վերաբացման դեպքում, ծնողների 51%-ն իրենց երեխաներին կուղարկի դպրոց:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- **Տվյալների հավաքագրում՝** հունիս 21-29, 2020թ.
- **Ընտրանքի մեծություն՝** 774 հարցվող (18+ տարեկան)
- **Տվյալների հավաքագրման մեթոդ՝** հեռախոսային հարցումներ համակարգչի օգնությամբ
- **Հարցվողների ընտրություն՝** զանգ պատահականորեն գեներացված համարներին ըստ շուկայում հեռախոսային օպերատորների զբաղեցրած մասնաբաժնի
- **Արձագանքման աստիճան՝** զանգերի հաջողված փորձերի 45%-ը
- **Զանգահարելու փորձեր՝** ընդհանուր 9605 զանգ
- **Ընտրանքի սխալ՝** 3.5% ամբողջ ընտրանքի համար
- **Կշռում՝** կշիռներ ըստ բնակության վայրի (մայրաքաղաք/քաղաք/գյուղ), տարիքի և սեռի՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա

Նշում 1: Գծապատկերներում օգտագործված է տոկոսն ամբողջի մեջ, եթե այլ նշում չկա, կշռված տվյալների հիման վրա:
Նշում 2: ԴՊ՝ դժվարանում եմ պատասխանել, ՀՊ՝ հրաժարվում եմ պատասխանել:

ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սեռ



Տարիք



Բնակության վայր



Կրթություն



ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցվածների հիսունութ տոկոսը (58%) **աշխատանք է ունեցել**, և նրանց գրեթե **տասնութ տոկոսը** (18%) ներգրավված է եղել «**Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն**» ոլորտում:

Նշվածներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր զբաղվածության կարգավիճակը:



Ո՞րն է Ձեր զբաղվածության ոլորտը:



ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցվածների մոտ մեկ երրորդը (31%) նշել է, որ իր տնային տնտեսության ամսական եկամուտը կազմել է **48.001-120.000 ՀՀ դրամ,** (~98 – 245 $) և մոտ **հինգ տոկոսի** (5%) եկամուտը գերազանցել է **575.001 ՀՀ դրամը** (~1178 USD):

Եթե հաշվի առնեք Ձեր ընտանիքի/ տնային տնտեսության բոլոր անդամների անցյալ ամսվա դրամական եկամուտը, բոլոր հարկերը մուծելուց հետո ո՞ր միջակայքում է այն եղել:



ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցվածների մոտ **երեսունհինգ տոկոսը** (35%) **համաճարակի բռնկման պատճառով կորցրել է իր աշխատանքը կամ նրանց եկամուտը նվազել է:** Հետաքրքիր է, **որ տղամարդկանց մոտ քառասունհինգ տոկոսն** (45%) **է նշել**, որ **կորցրել է իր աշխատանքը** կամ կրճատվել են աշխատանքային ժամերը, մինչդեռ նույն պատասխանը տվել են **կանանց միայն քսանյոթ տոկոսը** (27%):

Համավարակի բռնկման հետևանքով արդյոք կորցրե՞լ եք Ձեր աշխատանքը կամ կրճատվե՞լ են Ձեր աշխատանքային ժամերը/եկամուտը:



Հետևյալներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր գործողությունները՝ կորցրած եկամուտը վերականգնելու ուղղությամբ: (Ընտրել բոլոր հնարավոր պատասխանները) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)



ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցվածների կեսից ավելին (54%) նշել են, որ **համավարակի պատճառով** իրենց անձնական **ֆինանսական վիճակը վատթարացել է**: Այնուամենայնիվ, հարցվածների **քսանհինգ տոկոսը** (25%) հավատում է, որ առաջիկա 12 ամիսների ընթացքում իրենք և իրենց ընտանիքը **կլինի ավելի շուտ լավ կամ շատ ավելի լավ տնտեսական վիճակում, քան այսօր:**

Համավարակի պատճառով Ձեր անձնական ֆինանսական վիճակը վատթարացե՞լ է:



Ըստ Ձեզ՝ առաջիկա 12 ամիսների ընթացքում Դուք և Ձեր ընտանիքը կլինեք ավելի լա՞վ, թե՞ ավելի վատ տնտեսական վիճակում, քան այսօր:



ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԸ COVID 19-Ի ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նոր կորոնավիրուսի համավարակը ամենակարևոր խնդիրն է (36%), որը ծառացած է երկրի առջև, առաջ անցնելով գործազրկությունից (33%):

Հայաստանի առջև ծառացած խնդիրներից որո՞նք են Ձեզ ամենից շատ անհանգստացնում:



ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԸ COVID 19-Ի ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հարցվածների 51%-ը նշել է, որ կորոնավիրուսը առողջապահական համակարգի խնդիր է, մասնավորապես **կին հարցվածների կեսից ավելին** (56%) է եղել այս կարծիքին, իսկ **տղամարդկանց կեսից քիչը** (47%):

Նշված պնդումներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տեսակետը Հայաստանում կորոնավիրուսի մասին:



Ձեր կարծիքով ո՞րն է վարակի տարածվածության հիմնական պատճառը:

ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԸ COVID 19-Ի ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կորոնավիրուսի մասին գերադասելի տեղեկությունների համատեքստում, **մոտ մեկ երրորդը** (34%) **կարծում է, որ լրացուցիչ տեղեկությունների անհրաժեշտություն չկա**, իսկ **մեկ քառորդը** (25%) **նշել է, որ կցանկանար իմանալ արդյունավետ բուժման մասին:**

Ինչպե՞ս կգնահատեք Ձեր տեղեկացվածության մակարդակը կորոնավիրուսի պատճառների վերաբերյալ և կորոնավիրուսից Ձեզ պաշտպանելու միջոցների հարցում:



Ի՞նչ հավելյալ տեղեկություններ կուզենայիք ստանալ կորոնավիրուսի մասին: (Ընտրել բոլոր հնարավոր պատասխանները) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)



THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

CRRC Armenia

ԱՌՈՂՋԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ COVID 19-Ի ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հարցվածների մոտ մեկ երրորդը (34%) կորոնավիրուսով **վարակվելու ռիսկը բարձր է** գնահատում, մինչդեռ միայն **քսանչորս տոկոսն** է (24%) հավատում, որ կորոնավիրուսով վարակվելու պարագայում իրենց՝ **շատ ծանր հիվանդանալու ռիսկը բարձր է**:

Որքա՞ն բարձր եք գնահատում Ձեր՝ կորոնավիրուսով վարակվելու ռիսկը:



Որքա՞ն բարձր եք գնահատում կորոնավիրուսով վարակվելու պարագայում Ձեր՝ շատ ծանր հիվանդանալու ռիսկը:



ԱՌՈՂՋԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ COVID 19-Ի ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Կորոնավիրուսով վարակվելու ռիսկն ինչո՞ւ եք **բարձր** համարում: (Ընտրել բոլոր հնարավոր պատասխանները) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)*

*Կորոնավիրուսով վարակվելու ռիսկն ինչու՞ եք **ցածր** համարում: (Ընտրել բոլոր հնարավոր պատասխանները) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)*



ՎԱՐՔԱԳԻԾԸ COVID 19-Ի ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

«Դիմակ դնելը» և **«ձեռքերը հաճախ լվանալը»** համավարակից խուսափելու ամենատարածված կանխարգելիչ միջոցներն են:

Կորոնավիրուսից պաշտպանվելու համար ի՞նչ գործողությունների եք դիմում:
(Ընտրել մինչև երեք պատասխան) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)



ՎԱՐՔԱԳԻԾԸ COVID 19-Ի ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կորոնավիրուսի ախտանիշներ ունենալու դեպքում հարցվածների մոտ կեսի (46%) առաջին գործողությունը **կլինի «բժշկական հաստատություն» դիմելը:**

Կորոնավիրուսի ախտանշաններ ունենալու դեպքում ո՞րը կլինի Ձեր առաջին գործողությունը:



ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Պետական հաստատությունների շարքում առավել մեծ վստահություն ունի **«Առողջապահական համակարգը»** (54%), մինչդեռ **Առողջապահության նախարարությանը** վստահում են հարցվածների **41%-ը**:

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում որքանո՞վ եք վստահում կամ չեք վստահում հետևյալ կառույցներին



ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հարցվածների շուրջ քսանհինգ տոկոսը (25%) **լիովին վստահում է** ու քսաներեք տոկոսը (23%) **ավելի շուտ վստահում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը** (ԱՀԿ): **«Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել»** տարբերակը **բավականին բարձր է միջազգային դոնորներին** (օր.՝ Ասիական զարգացման բանկ, Համաշխարհային բանկ, Միավորված ազգերի կազմակերպություն և այլն) վերաբերող հարցում՝ կազմելով երեսուներկու տոկոս **(32%):**

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում որքանո՞վ եք վստահում կամ չեք վստահում հետևյալ կառույցներին:



ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Առավել անվստահելի է «Սոցիալական մեդիա»-ն, քանի որ հարցվածների քսանվեց տոկոսը (26%) նշել է, որ «Բոլորովին չի վստահում» և տասնինը տոկոսը (19%) նշել է, որ «Ավելի շուտ չի վստահում»:

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում որքանո՞վ եք վստահում կամ չեք վստահում հետևյալ կառույցներին:



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հարցվածների **քառասուներկու տոկոսը (42%) նշել է, որ կցանկանար կորոնավիրուսի ազդեցությունը մեղմելու համար ՀՀ կառավարության կողմից** գործադրվող ջանքերը առավելապես սևեռվեին **«Առողջապահական համակարգին»**:

Ըստ Ձեզ՝ որքանո՞վ են կորոնավիրուսի հետևանքների դեմ պայքարում ՀՀ կառավարության ներկայացրած աջակցության փաթեթները բավարար:



Կորոնավիրուսի ազդեցությունը մեղմելու համար ո՞ր ոլորտների վրա կուզենայիք, որ ՀՀ կառավարությունն առավելագույնս սևեռի գործադրվող ջանքերը: (Ընտրել մինչև երեք պատասխան) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հարցվածների ճնշող մեծամասնությունը (65%) նշել է, որ **իրենք և իրենց ընտանիքները** կորոնավիրուսի սոցիալական ազդեցությունը մեղմելու համար **կառավարության կողմից ձեռնարկված աջակցության ոչ մի միջոցառումից չեն օգտվել:**

Կառավարության՝ կորոնավիրուսի սոցիալական ազդեցությունը մեղմելու նպատակով ձեռնարկած աջակցության ո՞ր միջոցառումներից եք Դուք կամ Ձեր ընտանիքն օգտվել: (Ընտրել բոլոր հնարավոր պատասխանները) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կորոնավիրուսի արդյունքում առաջացած **ֆինանսական վիճակը մեղմելու համար հարցվածների մոտ քսանյոթ տոկոսը** (27%) նշել է, որ կցանկանար **«Վարկային վճարների/մարման ժամկետների հետաձգում»:**

Ձեր ֆինանսական վիճակը մեղմելու համար անձամբ Դուք կառավարությունից ի՞նչ միջոցառումներ/աջակցություն եք ակնկալում: Ընտրել մինչև երկու պատասխան) (Հարցվողները ընտրել են ցանկից: Պատասխանները միավորված են:)



THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

CRRC Armenia

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Հարցվածների մոտ 43%-ը կարծում է, որ դպրոցները սովորականի պես կվերաբացվեն սեպտեմբերին: Սեպտմբերին դպրոցների վերաբացման դեպքում, ծնողների **51%-ն իրենց երեխաներին կուղարկի դպրոց:**

Ըստ Ձեզ՝ որքա՞ն հավանական է, որ դպրոցները սովորականի պես կվերաբացվեն սեպտեմբերին:



Հետևյալ պնդումներից ո՞րն է լավագույնս բնութագրում Ձեր գործողությունները, եթե դպրոցները վերաբացվեն աշնանը:



COVID-19-Ը ԵՎ ՄՈՏ ԱՊԱԳԱՆ

Հարցվածների 39%-ը նշել է, **սահմանափակումներ չպետք է կիրառվեն** նույնիսկ եթե Հայաստանում աճեն կորոնավիրուսի նոր դեպքերը: Նրանց **66%-ը** կարծում է, **որ տնտնեությունը պետք է գերակա լինի առողջապահական մտահոգություններին:**

Որքանո՞վ եք կողմ նորից խիստ սահմանափակումների կամ տեղաշարժի արգելքների կիրառմանը, եթե կորոնավիրուսով վարակվածների թիվը Հայաստանում շարունակի զգալիորեն աճել:



Ինչու՞ եք դեմ խիստ սահմանափակումների կամ տեղաշարժի արգելքների կիրառմանը:



THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

CRRC Armenia

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Հարցվածների կեսից ավելին (54%) նշել են, որ իրենց տնտեսական վիճակը վատթարացել է համավարակից ի վեր, ինչի պատճառով նրանք կորցրած եկամուտը վերականգնելու նպատակով սկսել են ծախսել ավելի քիչ գումար անհրաժեշտ պարագաների, այդ թվում՝ սննդի վրա:

- Հետազոտությունը ցույց տվեց, որ հարցվածների մեծամասնությունը հավանություն է տվել կառավարության աջակցության միջոցառումներին: Մեծամասնությունը նաև վստահում է պետական կառույցներին, այդ թվում՝ առողջապահական համակարգին և ոստիկանությանը:

- Կորոնավիրուսի ախտանշաններ ունենալու դեպքում հարցվածների քառասունվեց տոկոսը (46%) նշել են, որ կգնա բժշկական հաստատություն: Մինչդեռ, ըստ ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի, առաջին գործողությունը պետք է լինի զանգը բժշկական հաստատություն կամ թեժ գիծ:

- Հարցվածների քսանհինգ տոկոսը (25%) ցանկություն են հայտնել իմանալ բուժման արդյունավետ միջոցների մասին: Տեղեկատվական արշավները կարող են նպաստել հասարակությանը ներկայացնելու թե՛ անհրաժեշտ քայլերը, որոնք պետք է ձեռնարկել կորոնավիրուսի ախտանիշներ ունենալու դեպքում, թե՛ արդյունավետ բուժման միջոցները:

- Վարակի հասարակական ընկալումների և ինստիտուցիոնալ արձագանքների շարունակական մշտադիտարկումն անհրաժեշտ է բացահայտելու հասարակությանն առավել անհանգստացնող ոլորտները, քանի որ համավարակը շարունակում է իր ազդեցությունն ունենալ հանրային առողջության և տնտեսական ճգնաժամի վրա:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային Բանկ

yerevan@worldbank.org
(+374 10) 52 09 92
Գրիգոր Լուսավորչի փող., 9 շ., Երևան 0015, Հայաստան

ՀՌԿԿ – Հայաստան

info@crrc.am
(+374 10) 57 48 98, 57 48 68
Ալեք Մանուկյան 1շ., ԵՊՀ գրադարանի մ/շենք, 6-րդ հարկ, 602 սենյակ, Երևան 0025, Հայաստան